Արձանագրություն N 2

«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Վառելիքի՝ ռեգուլյար բենզինի մատակարարման)

ք. Երևան

23 հունիսի 2017թ.
ժամը՝ 09:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի
նախագահ՝ Ա.Գրիգորյան
քարտուղար՝ Վ.Պապիկյան
անդամներ Գ.Սիմոնյան, Գ.Ալոյան, Ա.Մկրտչյան, Ս.Զոբանյան

1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա Վառելիքի /ռեգուլյար բենզին/ ձեռքբերման մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակվել է <gnumner.am> կայքի գնանշման հարցում կատարելու ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև <www.armeps.am> էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են ք.Երևան Մ.Մկրտչյան 5 հասցեում, 2017 թվականի հունիսի 23-ին՝ ժամը 09:00-ին <www.armeps.am> էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. <www.armeps.am> կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Սիֆիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1,հեռ. 010540911, 010526746
2.	«ՖԼԵՇ» ՍՊԸ	ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30, հեռ. 010534233
3.	«Մաքսհուր» ՍՊԸ	ք. Երևան,Տպագրիչների 8, հեռ. 010526751

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

Հ/հ չափաբաժին	Ապրանքի անվանումը	Ընդհ. գումարը հաստատված ՀՀ դրամով	Մասնակիցների առաջարկած գները՝ ՀՀ դրամ					
			«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ		«ՖԼԵԾ» ՍՊԸ		«Մաքսիուր» ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն ներառյալ	Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն ներառյալ	Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն ներառյալ
1	Բենզին /ռեգուլյար /	1 630 000	1 256 250	1 507 500	1 252 500	1 503 000	1 270 500	1 524 600

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

5. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

6.1 «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն՝ մասնավորապես,վճարման պահանջագրում տվյալները լրացված են ոչ ճիշտ:

«Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում նույնպես առկա են անհամապատասխանություններ՝ գնային առաջարկի հավելվածում «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում գները թվերով լրացված է, իսկ տառերով բացակայում է, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագիրը /հայտի ապահովում/ ներկայացված է առանց ամսաթվի, որը լրացվում մասնակցի կողմից, իսկ վճարման պահանջագիրը ներկայացված է թերի՝ մասնավորապես արժույթը/ բառերով և կոդով/ տողը լրացված չէ:

Ընդունել ի գիտություն, որ «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախարարությունը ս/թ հունիսի 22-ին թիվ 07/18.3.1/6197-17 գրությամբ արդեն իսկ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն նմանատիպ խնդիրների վերաբերյալ պարզաբանում ստանալու համար՝ հանձնաժողովը որոշեց.

«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստը կասեցնել, մինչև սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պաշտոնական պարզաբանում ստանալը:

Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների հայտերի հետագա գնահատումը գնահատող հանձնաժողովի կողմից կշարունակվի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հանձնաժողովի քարտուղարի կողմից հարցումը կիրականացվի լիազոր մարմնի կողմից պաշտոնական պարզաբանում ստանալուց հետո:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա լիազոր մարմնի կողմից պաշտոնական պարզաբանում ստանալուց հետո:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա լիազոր մարմնի կողմից պաշտոնական պարզաբանում ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ _____ Վ.Պապիկյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ.Սիմոնյան

_____ Գ.Ալոյան

_____ Ս.Զոբանյան